Արձանագրություն N 2
ՀՀ Լոռու մարզի Մեծավանի համայնքապետարանի կարիքների համար տրակտորի ձեռքբերման «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

| | |
|---|---|
| *գ. Մեծավան* | «18» «հուլիսի» 2019թ.<br>ժ 11:00 |
| Մասնակցում էին՝ | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Դումիկյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Մ. Խանաղյան |
| | Տ. Խաչատրյան |
| | Ա. Խանաղյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Մարկոսյան |

1. **Տեղեկություններ «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/04 » ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին**

/Ա. Դումիկյան/

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2019թ. հուլիսի 18-ին ժամը 11:00-ին, ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Զորավար Անդրանիկի 2, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. **«ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

/Ա. Դումիկյան/

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Հասցե | Էլ. Փոստ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Տրակտոր | «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ | 06947049 | Ք. Երևան 0041, Արցախի 28/15 | specmashllc@mail.ru |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

3. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

/Ա. Դումիկյան/

3.1 «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը | Առաջարկած գինը | | | Նախահաշվային գինը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր | |
| 1. | Տրակտոր | «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ | 32000000 | 0 | 32000000 | 32000000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

## 4. Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

/Ա. Դումիկյան/

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|---|
| 1. | Տրակտոր | «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ | Բավարար |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

## 5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

/Ա. Դումիկյան/

5.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնման ընթացակարգի 1 չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՍՊԵՑՄԱՇ» ՍՊԸ-ը որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

## 6. ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

/Ա. Դումիկյան/

6.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 19.07.2019թ. հարցում ներկայացնել ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը 19.07.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

7. **Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

/Ա. Դումիկյան/

7.1. «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության տրամադրման հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Զորավար Անդրանիկի 2, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | | Ա. Դումիկյան |
| Անդամներ՝ | | Տ. Խաչատրյան |
| | | Մ. Խանաղյան |
| | | Ա. Խանաղյան |
| Քարտուղար՝ | | Գ. Մարկոսյան |